

ջինչ կերպով տպաւորուած պիտի լինի մանաւանդ նոցա սրտում, որոնք վայելում են և վայելում են այդ նուիրական երեք սրբութեանց մայրական խնամքն ու հոգատարութիւնը: Թող շմոռանան նոքա թէ ո՛ր չափով երախտապարտ են այս շնորհատու հաստատութեանը, չմոռանան թէ ի՞նչ ծանր: բայց և քաղցր պարտականութիւն կայ իրանց վրայ-իրանց բոլոր ոյժերով, հոգով և մօրմնով ձգտելու դէպի սորա վսեմ նպատակը: Եւ միայն այն ժամանակ, երբ ճեմարանիս սաները քաջ կ'ըմբոնեն թէ այս մի քաղցր լուծ է որ դնում են նոցա վրայ Ազգն ու Եկեղեցին, մենք կարող կը լինինք ասել թէ, իրաւի, այս համազգային հաստատութեան վրայ գործ դրուած ջանքերը ի դերև չեն ելանում:

Այս տեղ, այս հինաւուրց Ա. Տաճարի հովանու տակ, ալևոր Մասեաց ստորոտում, մի վայրկեան յետ նայենք և տեսնենք մտաւոր աշբով, թէ ի՞նչ է կատարուել դարերի ընթացքում այս հողի վրայ: ուր մենք ենք այժմ կանգնած՝ նայենք թէ ի՞նչ աղէտալի տեսարանների վկայ է եղել այս մեզ համար պատմական սրբութիւն դարձած դաշտը: տեսնենք ի՞նչ տեղից ենք եկել, ուր պիտի դնանք և ի՞նչ ձանապարհով:

Եւ հաւատանք որ կը գայ մի օր, երբ Անուշաւանի նուիրական սօսիքը նորից մեղմիկ կը շշնչեն: Զէ մեռած չէ, դեռ կենդանի է այս չարատանջ ազգը, կենդանի էլ, որովհետեւ յառաջադիմութեան ընդունակ մի ազգ մեռնել չէ կարող:

Մաղթենք ուրեմն ի սրտէ որ միշտ հաստատուն, միշտ պայծառ մնան մեր սիրեցեալ Ազգն ու Եկեղեցին: Կեցցէ՛ Մայր Աթոռն ու Վեհափառ Հայրապետ, Կեցցէ՛ Ճեմարան:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,

1888 ամիս

Սեպտեմբերի 24

Ա. Էջմիածին,

ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԲԵՐԻՆ:

Անցեալ Սեպտեմբերի 3 ին Մայրագոյն Պատրիարք Կաթուղիսուր կոնդակիով Հաղորդեց Եջմիածնի Սինօդին, որ ի՞նքը մըտադիր է ծեառն օգնականութեամբ Սեպտեմբեր ամսի 11 ին ուղևորել դէպի Թիֆլիզ և յանձնեց Սինօդին կարևոր կարգադրութիւններն անել առ այն: Ոինօդը նոյն օրը կազմելով Վեհափառ Կաթուղիկոսի ճանապարհորդութեան ուղեցոյցը՝ ուղարկեց Կովկասի Կառավարչապետի դիւնաւատան Պ. Կառավարչին անօրինելու որ ի՞նչ հարկն է, և այս ուղևորութեան

մասին տեղեկութիւն տուեց Վրաստանի և Երեանայ թեմակալ առաջնորդներին: Սեպտեմբերի 9 ին գնդապետ Շատիլովը հեռագրով յայտնեց Սինօդին, թէ Հալորդուած է Տփլիխի փոստ - հեռագրատան շրջանի Կառավարչին պատրաստելու պատրիարքի գալստեան համար կառքեր և ձիեր, իսկ Գանձակի և Երեանի նահանգապետներին առաջադրած է օժանդակելու բարեյաջող և անարգել գալուն: Արդէն ամսի 4 ից Վեհափառը անդադար ընթացք էր տալիս Ախնօդի անդամների և ատենադպրի գեկուցած անյետաձգելի անհրաժեշտութիւն ունեցող գործերին: Եւ նոյն ժամանակից արդէն պատրաստութիւն էր տեսնվում Վեհափառի ուղևորութեան համար: Սեպտեմբերի 10 ին երեկոյեան Պատրիարք կաթուղիկոսը գնալով Տաճարը ներկայ եղաւ Խաչլերացի նախատօնակին, շրջապատուած Վաղարշապատի և շրջակայ տեղերի բնակիչների խուռն բազմութեամբ: Որոնք շտապել էին Վեհափառի օրհնութիւնը առնելու: Նորա առժամանակեայ 11. Էջմիածնից բացակայելու պատճառով: Եկեղեցի մտնելը և վերադարձը գեպի վեհարան ներկայացնում էր որդւոց իրանց հօրից բաժանուելու մի ճշգրիտ պատկեր:

Ամսի տասնու մեկին վաղ առաւօտեան վեհարանը խռնը-վում էր Վեհափառի օրհնութեան կարօտ անձանց բազմութեամբ: Այդ օրը Կաթուղիկոսը ընդունեց Սինօդի ծառայողներին, զանազան դասակարգի պաշանական անձանց, Վաղարշապատի բնակիչներին, հոգեոր ձեմարանի ուսուցիչներին և աշակերտներին և ուրիշներին, որոնք ամենքն էլ յայտնում էին իրանց որդիական հաւատարմութիւնը և ցանկութիւն բարեյաջող շուտափոյթ վերադարձի մասին: Վեհափառը բոլոր ներկայացներին բաշխեց իւր ջերմագին օրհնութիւնները և հայրական խրատները: Նոյն օրը 11 ժամին Էջմիածին եկան բազմաթիւ շափարների հետ միասին Երեանի գաւառապետ Սիլիչը և նահանգապետակ առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր Քալանթարեանցը, որոնք յայտնեցին Պատրիարքին, թէ իրանք ուղարկուած են գեներալ Շալիկովի կողմից ուղեկցելու Վեհափառին, առաջինը Երեանի գաւառում, իսկ միւսը մինչեւ Դիլիջան: Նուտով այսուհետեւ ներկայացաւ Վեհին Երեւանի փոստ - հեռագրատան կանտօրի կառավարիչ Կօնկօշեվը

և յայտնեց, թէ Թիֆլիզի վոստ - հեռագրական շրջանի կառավարիքը իւր վերայ պարտք է դրել արտայայտել նորա յարգանքի ողջոյնը և ուղեկցել Վեհափառին մինչև Դիլիջան, ուր իրան կը փոխարինէ մի ուրիշ աստիճանաւոր, որ նշանակուած է Վեհին մինչև Աղստավիա ուղեկցել, Կօնկօշեվը յայտնեց նաև, թէ ուղեղութեան վերաբերեալ բոլոր պատրաստութիւնները արդէն տեսնուած են: Մէկ ժամին տաճարի զանգերը ծանուցին Եջմիածնայ միաբանութեանն, թէ Հայ եկեղեցու Պետի մեկնելու ժամը մօտեցած է արդէն: Գաւթում ժողովուած ամբողջ միաբանութիւնը դիմեց գէպի վեհարան հրաժարականը տալու իրանց հօգեւոր Հօրը, որ առժամանակ թողնում էր իրանց: Վեհափառ Կաթողիկոսը դահլիճ դուրս եկաւ և դարձաւ միաբանութեան այս խօսքերով.

« Աիրելի եղբարք. յայտնի լինի ձեզ, որ ես այս ուղեղութիւնը յանձն են առնում Հայաստանեայց սուրբ եկեղեցու պատիւը պաշտպանելու համար, վասն որոյ Զերմագին ցանկացէր իմ ուղեգնացութեանս յաջողութիւն և աղօթեցէք վասն այդը առ Աստուած, յիշեցէք իւրաքանչիւրդ ձեր պարաքը և խաղաղութեամբ կացէք »:

Միաբանութեան անդամները մի առ մի համբուրեցին Վեհափառի աջը և դուրս եկան միւս դահլիճը, սպասելու Վեհի դուրս գալուն: Վանքական գործերի հսկողութիւնը Վեհը յանձնեց Մինօդի աւագ անդամ Երեմիայ եպիսկոպոսին: Մէկ ժամ՝ 45 րոպէէն սկսուեցան զանգերի մեծահնչիւն զօղանջիւնը, որ աղօթքի էր հրաւիրում պատրիարքի ուղեղութեան առթիւ, որը միաբանութեան և ժողովրդի ուղեկցութեամբ, առջելից ունելով խաչ և խաչուառով երգեցիկ խումբը, ընթացւ գէպի տաճարը: Վեհափառը երկրպագելով որբոց մասունքներին և ներկայ լինելով ճանապարհորդաց « Տէր ուղեկեա աղօթքին դուրս եկաւ տաճարից և նոյն կարգով, շրջապատող ամբոխի հետ դիմեց գէպի տաճարի արտաքին դուռը, ուր պատրաստ սպասում էին կառքերը: Մայրագոյն Պատրիարքը նստաւ կառք, իսկ նորան ուղեկցող Թագէոս արքեպիսկոպոսը, Գրիգոր եպիսկոպոսը և Սահակ վարդապետը նստեցին հետեւեալ կառքի մէջ. նոցա եանից գնումէին կառքերով Վեհափառի մը-նացեալ ուղեկիցներն ու ճանապարհ դնող բազմութիւնը: Առ-

ջնից ձի նստած ընթանում էին Երեանի գաւառապետ Սիլիչն
ու Քալանթարեանցը, յետոյ փսստ-հեռագրատան աստիճանա-
ւոր Կօնկօշեվը. իսկ Էջմիածնի գաւառապետը կառքով գնու-
մէր կողքեց: Վեհափառին ձի հեծած ճանապարհ էին գնում
Էջմիածնի գաւառապետի օգնուկանը, ուղեզահների գլխաւորը
հեծեալ կազակներով և բազմաթիւ չափարներով, նոյնպէս և
Վաղարշապատի և շրջակայ գիւղերի բնակիչներ: Ընթացքը
Վաղարշապատի փողոցներով խունուած բազմութեան պատճա-
ռով՝ յամբընթաց-հանդիսաւոր էր: Բայց ահա գնացքը մօտե-
ցաւ Երեանի այգիներին: Հեռուից տեսնվում էին կառքեր,
ձիաւորներ, հետևակներ: Վեհափառի կառքը կանդ առաւ,
այդտեղ դիմաւորեցին և ողջունեցին Երեանի թեմակալի փո-
խանորդ Սուքիաս եպիսկոպոսը, Երեանի ոստիկանապետը կա-
զակներով, քաղաքագլխի պաշտօնակատարը՝ քաղաքային խոր-
հրդի երկու անդամներով և Երեան քաղաքի պատուաւոր ան-
ձինք: Քայլ առ քայլ՝ աւելի ու աւելի շատանում էր ժողո-
վուրդը, գնացքը դանդ աղանում էր, և Վեհափառի օրհնու-
թեան կարօտ ամբոխը դիմումէին դէպի նորա կառքը: Զան-
գիի վերայի կամրջին մօտ կանգնած էին թուրք աղքաբնակու-
թեան ներկայացուցիչները, իրանց առաջնորդ ունենալով ոս-
տիկանական աստիճանաւոր Սուլթանովին: Ամբոխը այնչափ
շատացու. որ երբ Վեհափառը մօտեցաւ սուրբ Սարգիս աւագ-
եկեղեցին, արդէն կառքը հազիւ էր կարողանում առաջ գնալ:
Հոգեորականութիւնը խաչերով, խաչուառներով և երգեցիկ-
ներով կանգնած էր եկեղեցուն մօտ. Վեհափառը բարեհանե-
ցաւ կառքից դուրս գալ և սկսաւ հանդիսաւոր մուտքը դէպի
եկեղեցին. Վեհափառը ամպովանու տակ էր, որ բռնած ու-
նէին Երեանի չորս պատուաւոր քաղաքացիք: Եկեղեցի մոնե-
լու ժամանակ այնքան մեծ էր բազմութիւնը, որ ոստիկանու-
թիւնը հազիւ էր կարողանում ճանապարհ բանալ. Եկեղեցու
պողոտան կանաչով ու ծաղիկներով լիքն էր, կարգ կարգ շա-
րուած՝ հայ դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիք
սփռում էին Վեհափառի առաջ պատուական ծաղիկներից
կաղմած փնջեր: Վեհափառ Կաթողիկոսը պատշաճաւոր ա-
ղօթքի և երգեցողութեան ներկայ լինելուց յետ եկեղեցում՝
դուրս եկաւ այնտեղից և խաչը ձեռքին դէպի առաջնոր-

դարան, ուր պատրաստած էր բնակարան Վեհափառի համար: Առաջնորդարանում նորան սպասում էր Երեանի նահանգապետ Նալիկովը՝ Երեան քաղաքի այլ և այլ հաստատութեանց կառավարիչների և Պարսից հիւտատոսի հետ (այն է՝ Երեանի գիմ-նազիայի վերատեսչի, ուսուցչական սեմինարիայի վերատեսչի, Ժանդարմի գնդապետի, նահանգգական դատարանի պրոկուրօրի ժանդարմի ադիւտանտի, բատալիօննի ադիւտանտի և տեղական յունադաւան եկեղեցու աւագ քահանայ Գանքարովի հետ): Առաջնորդարանի դրան շէմքում կանգնած էր նահանգապետի աւագ աստիճանաւոր Մակինսկի - խանը: Երբ Վեհափառ Կաթողիկոսը մօտեցաւ դրան շէմքին՝ առաջ եկաւ նահանգապետը և խաչը համբուրեց. Վեհափառը խաչակնքեց ժողովրդեան և մոտաւ դահլիճը, ու ներկայացան նորան բոլոր պաշտօնատար անձինք: Վեհափառը կարճատեւ խօսակցելուց յետոյ նահանգապետի հետ՝ մոտաւ իւր համար պատրաստած առանձնասեննեակը, իսկ նահանգապետն ու նորան շրջապատող մարդիկ ցրուեցան:

Կարճատեւ հանգատութիւնից յետ Վեհափառը մինչեւ Երեկոյեան Դ ժամը անընդհատ ընդունում էր քաղաքացիների ողջոյնները, առանձին խումբերով: Միւս օրը, Սեպտեմբերի 12ին, վաղ առաւտութանից շարունակուեցաւ քաղաքացիների ներկայանալը. և օրհնութեան արժանացան նաև թուրք հոգեւորականութեան ներկայացուցիչները և մահմետական ուսումնարանի աշակերտները, որոնք ներկայացան իրանց ուսուցիչ Միրզա Կեասումի հետ: Թաւրք տղայք երգեցին Միրզա Կեասումի ի պատիւ ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի յօրինած երգը: Վեհափառը, շնորհակալութիւն յայտնելով ուսուցչին՝ բանախօսութիւն արաւ լուսաւորութեան օգուտների մասին և պատուիրեց տղայոց քաղցրեղէն բաժանել: Միենայն օր ներկայացան՝ Հայ Հոգեւորականութիւնը, Հայ Հոգեւոր թեմական դպրանոցի ուսուցիչները և աշակերտները որոնց Վեհափառը կարեւոր խրատներ տուեց և անհրաժեշտ նկատողութիւններն արեց կրօնաբարոյական կրթութեան գործը կանոնաւոր առաջ տանելու համար, և տղայոց բաժանուեցաւ քաղցրեղէն: 12 ժամին եկան Վեհափառի բնակարանը Երեանի գաւառապետը և առանձին յանձնարարութեանց աստիճանա-

ւորը և յայտնեցին Վեհին, որ գեներալ Շալիկովը իւր հիւրերով սպասում է Վեհափառին ճաշի: Վեհափառը վեց ձի լծած կառքով երկու շաթիրների թիկնապահութեամբ համրաքայլ և հանգիսաւոր գնացքով, ուղեկից ունելով հայերի և ուրիշների անհամար բաղմութիւնը ուղեւորուեց դէպի նահանգապետի կացարանը, առջեւից գնումէին, ոստիկանատան ծառայողները: Նահանգապետի տան շէմքում՝ դիմաւորեցին վայելուչ յարուանքով և այնուհետեւ շուտով ճաշից յետոյ Վեհափառը նոյն կարգով վերադարձաւ իւր բնակարանը, սկսաւ ընդունել հայերին, որոնց առաւօտ հերթ չէր հասել համրութել նորին Օծութեան աջը: 4 ժամին նա ընդունեց ս. Գայիհանեան օրիորդ ական ուսումնարանի աշակերտուհիներին և ուսուցչուհիներին, ասաց նոյս շատ հայրական խրատներ և մանուկներին քաղցրեղէն բաժանեց: Սեպտեմբերի 12 ին 8 ժամին Վեհափառը առանցնացաւ հանգստանալու և ընդունելութիւնը դադարեց:

Սեպտեմբերի 13-ին առաւօտեան սկսուեցան Վեհափառի երեանից դուրս գալու պատրաստութիւնները: 8 ժամին Ա. Սարգսի զանգակների հնչիւնը ծանոյց եկեղեցու գաւթում ժողովուածներին Վեհի դուրս գալը. Երեանի հայ ազգաբնակութիւնը չնայելով առաւօտեան վաղ ուղեւորութեան, գլխարաց յարգանքով սպասումէր վեհափառի դուրս գալուն. զագախներ, չափարներ, ձիաւորներ, կառքեր փակել էին գաւթիթը. Ժողովուրդը վրայ էր թափվում Վեհափառի աշն առնելու, որը գնումէր եկեղեցի, որտեղից կարճատեւ աղօթքից յետ Վեհափառը դուրս գալով՝ նստեց կառք և սկսուեց ուղեգնացութիւնը: Կառքերը դանդաղ էին առաջ գնում, հայ եկեղեցիների զանգերը զօղանջում էին քաղցր հնչիւնով. Երեանի բնակիչները առանց ազգութեան խորութեան հետեւում էին գնացքին: Վաճառանոցի հրապարակով անցնելու միջոցին Վեհափառին մօտեցաւ Երեանի նահանգապետը, որ Մակինը կի խանի հետ սպասում էր նորան, Վեհափառը հրամայեց կառքը կանդնեցնել, հրաժարական ողջոյն տուաւ գեներալ Շալիկովին, և ծանր քայլով շարունակուեց գնացքը Աստաֆիիսկի փողոցով: Այս երկար փողոցի ծայրին վեհափառը խաչակնքելով ժողովրդեան օրհնեց նոցա և արձակեց իւր բարեպաշտ հօար: Քանաքեռում վեհափառը կառքը կանգնե-

ցրեց, որ համբուրէ հոգեորականութեան մատուցած Խաչը Ցեղական և շրջակայ գիւղերի բնակիչները մատուցին Վեհափառին աղուհաց: Այնուհետև ճանապարհին մեծ ու փոքր ուղեռում էին Վեհափառին: Ելեար իջևանում աղ ու հաց ընդունելով Վեհափառը առաջ գնաց դէպի սուխօֆօնդանի իջևանը, ուր ճաշ էր պատրաստած: Բայց ահա հեռուում Երեանի ու Նոր բայազիկի սահմանի վերայ Ճիաւորներ երևանցին, Նշանազգեստները փայլեցին, Նոր բայազիկի գաւառապետ Սիմէօնենիօն երեադ բազմաթիւ հեծեալներով: Վեհափառը հրամայեց կառքը կանգնացնել, գաւառապետը, Նորա օգնական Մելիք Ղափլանովը և ուղեռութեան տնօրէն (Աստանական Հաշուականութեան և Արալիխ գնացող հարիւրաւոր կազակներ թնդացրին բարձրաձայն «կեցցէ»: Վեհափառի կառքը շարժուեցաւ և ճանապարհորդութիւնը շարունակուեցաւ՝ $11\frac{1}{2}$ ժամին վեհափառը հասաւ Սուխօֆօնտանի իջևանը, ուր մալականների տների կտուրները զարդարուած էին երկներանգ դրօշակներով: իջևանի մուտքի մօտ կանգնած էին շրջակայ գիւղերի հայերն ու մալականները, որոնք իւրաքանչիւրն առանձին մատուցին վեհափառին աղուհաց, իջևանը զարդարուած էր ծաղիկներով, դրօշակներով, իսկ իջևանի սենեակները ճոխ զարդարուած էին գորգերով: Վեհափառը այդտեղ իսկ ներկայացող հոգեորականութեան պատրաստած ճաշը վայելելով՝ շարունակեց ճանապարհը դէպի հետեւեալ իջևան: ճանապարհին ժողովրդի բազմութիւնը հետզհետէ աւելանումէր. երեւեցան նաև տէգերով զինուորուած քրդերը ճանապարհին հանդիպած գիւղերի տների կտուրներին ծածանումէին յանգատրաստից ձեւացրած դրօշակներ: Ահա երեւեցաւ Ախտայի կայարանը, որ ներկայացնումէր մի փունջ, Վեհափառի նշանագրօշմով (Յεւթեմ). Երբ վեհի կառքը կանգ առաւ, հնչեցին շրջակայ գիւղերի հայ բընակիչների ողջունի տղաղակները և պահնորդ շափարների «կեցցէ» ները: Վեհափառը մօտեցաւ մալականների և հայերի կողմից աղու հաց կրող սեղաններին, օրհնեց բնակիչներին և ամբողջ գաւառը, ընդունեց քահանաներին, և շուտով կառք նստաւ, որպէս զի Ելենովկա ժամանէ այնտեղ գիշերելու: Քրդերը, որոնք վեհափառի կառքի ետեից արշաւումէին, ա-

ուանձին եռանդով սկսեցին զանազան թոխքներ և ձիախաղեր անել:

Նշենովկայում՝ օթևանը պատրաստած էր ինուղու կայարանի շինութեան մէջ, որ գեօգչա լճի ափին է կառուցաց: Ամբողջ շինութիւնը նոյնպէս ծաղկիներով էր զարդարուած, կախած էին բազմագոյն լապտերներ և հրախաղներ էին պատրաստած: Այդ տեղ վեհափառին դիմաւորեցին նորբայաղիդի հոգեորականութիւնը և պատուաւոր անձինք, որոնք առաւօտուանից եկած էին նոր բայազիդից, որը 30 վերատ հեռու է գտնվում Նշենովկայից: Վեհափառը ընդունելով հոգեորականութեան և քաղաքացոց ողջոյներն ու ճառերը, տարածած գորգերի վերայից անցնելով մտաւ շինութեան ներսը: Ամբոխը ներս թափուեց և վեհափառի առաջ փռուեցաւ, որ ջերմագին օրհնեց ամենքին: Եզիդների ցեղից երեք քրդեր ծունկ չոգեցան, սողալով մօտեցան վեհափառի գարշապարին և սկսան համբուրել նորա ոտներն ու ձեռքերը: Վեհափառը շատ միիթարական խօսքեր ասաց նոցա . . . : Շուտով նորանից յետոյ սկսաւ լուսավառութիւնը, գիշերը հանդարտ էր, լիճը հայելու տեսք ունէր, իսկ վառուող լապտերներն ու հրավառութիւնը տալիս էին գիշերուան՝ երեւակայական, բանաստեղծական կերպարանք: Մեսարանը հրաշալի էր, նոր բայազիդցիները պատրաստել էին ճոխ ընթրկը և փառաւոր հիւրասիրութիւն արին: Սեպտեմբերի 14 ին առաւօտեան 8 ժամին վեհափառը Եշենովկից դուրս գնաց՝ Սեանաւ լիճը գեղեցիկ էր, որը պարզ էր և տաք, ուստի և գնացքը լճի ափին փառաւոր էր: Սեանայ վանքի հանդէպ լճի ափին շարուել էին վանքի միաբանութիւնը, վեհափառը մօտեցաւ միաբանութեան, հարցուփորձ արաւ ամենքին, խրատներ տուաւ նոցա, յորդորելով ամենքին իրանց ուխտին հաւատարիմ մնալ և սրբութեամբ կատարել վանքի կանոները: Ապա շուտով գնացքը հասաւ Սիմեօնովկա կայարանը, որից ոչ հեռու վեհափառին գիմաւորեց Ղաղախու գաւառակի ճանապարհների գլխաւոր Ղաղարեանցը իւր հեծեալներով: Սիմեօնովկայ իջեանն էլ զարդարուած էր դրօշակներով: Մալականները աղու հաց մասուցին Վեհափառին և սրտագին օրհնութիւն ընդունեցին: Այդ տեղ Ամեօնովկայում նորին Օծութիւնը կանչեց իւր

մօտ գաւառապետին և նորա օգնականին, շնորհակալութիւն յայտնեց նոցա ճանապարհների օրինակելի կարգապահութեան և նոցա գործունէութեան համար, և գնահատելով նոցա ջերմեռանդ վերաբերութիւը դէպի իրանց պարտականութիւնները, առաջարկեց նոցա յետ դառնալ, որին աւելացրեց, թէ նա չէ մոռանալու նոցա ծառայութիւնը: 10½ ժամին Վեհափառ սկսաւ իջնել դէպի Դիլիջան, ուր պէաքէ ճաշ վայել էր: 12 ժամին վեհափառ իջնանեց ճարտարապետ Նարալեանցի մօտ, և այդ տեղ գիմաւորեցին նորան Տիխիսու տռաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը և Ալեքսանդրապոլու յաջորդ Գրիգորիոս եպիսկոպոսը բակում պաշտօնազգեստ հագած կանգնած էին տեղական հիւանդանոցի բժիշկ՝ Քալանթարեանցը, անտառապետ կամսարականը, ճարտարապետ Սիմէօնեանցը և ճարտարապետ ճանապարհների հաղորդակցութեանց՝ Նարալեանցը: Վեհափառ ճաշելով այստեղ՝ օրհնեց հիւրերէր տանտիրոջ և տանտիրէնոջ և հիւրերին, և երկսւ ժամին պատուիրեց կառք բերել: Այդ տեղ իսկ Վեհափառ շնորհակալութիւն յայտնեց Երեւանից իրան ուղեկցող աստիճանաւոր Կօնկօշեվին և Քալանթարեանցին և արձակեց նոցա: Եկաւ տեղական փօստ-Հեռափրատան կառավարիչ Բագրաձէն: և յայտնեց թէ կառքերն արդէն պատրաստեն: Վեհափառ կառք նստաւ և տոջնից ունելով փօստ հեռագրատան աստիճանաւորի կառքը, բազմաթիւ թիկնապահներ և Ղազախի քնակչաց խուռն բազմութիւնը՝ ուղեւորուեցաւ դէպի Քարվանսարայ գիշերելու այնտեղ, ուր հասաւ Երեկոյեան 5 ժամին: Քարվանսարայում Վեհափառին ներկայացաւ Ղազախու գաւառապետի օգնական Միհայլովը: Վեհափառի համար տեղ էր պատրաստած տեղական հայոց դպրոցում, որ շատ սիրուն զարդարած էր թէ արտաքուստ և թէ ներքուստ: Երեկոյին լուսավառութիւնը կար և ճօխ լինթրիք էր պատրաստած:

Սեպտեմբերի 15 ին առաւօտեան վաղ նորին 0 ծութիւն դուրս եկաւ Քարվանսարայից, տեղական հոգեւորականութեան ուղեկցութեամբ: առջեկց գնում էին աստիճանաւոր Բագրաձէն և գաւառապետի օգնական Միհայլովը: Երբ հասաւ Ղազախի վեհափառի կառքին մօտեցաւ գաւառապետ իշխան Քարխանսվը: իսկ յետոյ ներկայացան Ղազախի գաւառի քա-

Հանայք և քաղաքի պատուաւոր անձինք։ Թէ քաղաքի և թէ շրջակայ գիւղերի բնակչները համբուրեցին Վեհափառի աջը։ 10 ժամին Վեհափառը գաւառուսպետի և բազմաթիւ թիկնապահների ուղեկցութեամբ բարեհաճեցաւ հասնել Աղստավա, ուր սպասում էր Վեհափառին Գանձակի յաջորդ Գրիգորիս վարդապետը Գանձակ քաղաքի պատգամաւորութեան հետ Վեհափառը ընդունելով վարդապետին և պատգամաւորութիւնը, հրամայեց ճանապարհը շարունակել մինչեւ երկաթուղու կայարան, ուր բարեհաճեցաւ նախաճաշել։ Այս տեղ Վեհափառը տեսակցելով իշխան Թարխանեանցի հետ հրաւիրեց իւր մօտ գանձակեցիներին հարցուփորձ արաւ նոցա իրենց վիճակի մասին, օրհնեց նոցա և արձակեց։ Ճիշտ 12 ժամին կայարանի կառավարիչը յայտնեց Վեհափառին, թէ պատրաստուած է առանձին գնացք Վեհափառը մուաւ երկաթուղին և սա առաջ շարժուեց։ Յ ժամին 5 ըոպէին նորին Վեհափառութիւնը բարեյաջող մուտք գործեց Թիֆլիզ։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻԶԻ Ա.ԶԳԱ.Ա.ՑԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻՆ

Ամսոյս 10-ին, առաւօտեան $9\frac{1}{4}$ ժամին Վեհափառ Հայրապետը պատուեց Ներսիսեան Ազգային Հոգեուր գպրանոցը իւր շահաբեր այցելութեամբ։ Նորին 0 ծութեան ուղեկցի էին տեղակալ Թագէսու Արքեպիսկոպոսը, վիճակաւոր Առաջնորդ, Արիստակէս Սրբազնն և գաւազանակիր Սահակ վարդապետը։

Դպրանոցի գաւթում՝ մուտքից սկսած՝ երկու շարքով կանգնած էին ուսուցիչները, որոնց նորին Վեհափառութեանը ներկայացրեց Դպրանոցի տեսուչ Սարգիս Ք. Բէգնազարեանը և մատոյց հետեւեալ յայտարարութիւնը։

ԶԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ

Ամենաշպատակօրէն յայտ առնեմ Վեհափառ Տէրութեան Ձերուժ, թէ ընդ բարձրագոյն հովանեաւ Ձերով ի Դպրոցիս ուսանին՝ ի միում նախակթական և ի վեց հիմնական դասարանով՝ 365 աշակերտք, բաշխեալք ի

մետասան սինեակու Նախակրթարան, առաջին, երկրորդ և երրորդ դասարանի ուսնին զմի-մի զուգընթաց դասարանս։ Թիւ որդեգիր աշակերտաց է 19 առ. ժամն։ Թիւ դասաւուաց և այլ պաշտօնաւոր անձանց քսան և հինգ, յորս են չորս վերակացուք, մի աւագ վերակացու կամ օգնական տեսչի, դրագարանապետ մի և բժիշկ մի։ Յեօթնեկի աւանդեալ լինին դասք 333 յամենայն դասարանս։ Օրական դասք ի նախապատրաստականի լինին կ և 5. իսկ ի միւս գասարանս 5 և 6. Ա-նդէն առարկէց ըստ ծր-էրէն։

Այնուհետեւ Սրբազան Աաաջնորդը պատիւ ունեցաւ ներկայացնելու հոգաբարձութան անդամներին, որոնց ուղղեկցութեամբ նորին Վեհափառութիւնը մուտ գործեց Դպրանոցի մեծ գահիճը, ուր շարուած էին բոլոր աշակերտները, և օրհնելով նոցա, բազմեցաւ բազկաթոռի վերայ։ Երգեցիկ խումբը այդ միջոցին ներդաշնակ հնեցցրեց բարէ երգը։ Այնուհետեւ համութեալ տեսուչը արտասանեց մի համութեալ ճառ։

Յետոյ հայր տեսուչը առաջ գնալով գէպի Վեհափառը, ծընկացոք համբուրեց նորին Սրբութեան աջը։ Երգեցիկ խումբը գարձեալ երգեց և ապա հինգերորդ դասաւոր տշակերտներից մէկը կարգաց հետեւեալ ուղերձը։

Ի ՀԱՆԴԻԾ ԳԱԼՈՑԵԱՆ 8. 8. ՄԱԿԱՐԱՑ ՄՐԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԲՈՒՂԻԿՈՍԻ Ի ՆԵՐՄՈՒՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑ

Ի ԴԻՄԱՑ ԱՇԱԿԵՐՑԱՑ ՈՒՂԵՐՁ.

ՎԵՀԱՓԱԾՈ ՑԷՌ.

Մեծ են բերիքանք և հրձուանք սրտից մանկաւոյս։ որ արդ պար զբնառեալ կամք զի հայրդ հանուրց հայկազանց։ որ ի հեռաստէ զմեզ ինսմերի, արդ ելեր մեզ յայցելութիւն։ Ոչ երբէք կարասցեն բանքս թոթովանց զմեծ ինդութիւն աշակերտացս Մեծին ներսիի յայտ առնել։

Քիրտն, զոր հեղերդ ի նպաստ հայկազեան մանկաւոյս, հորդեալ մեզ ուահ ի կրօն և յիմաստ և Աջդ օրհնութեան, որ ի վերայ մեր տարածեցեր առ ի ինամել զմեղ, երախտապարտ կացուցանեն զմեղ առաջի Ցեառնդ, իսկ դալուստ Մեծի Հօրդ մեզ յայցելելութիւն զանցուցանեն իսկ զշափերախտեացն։

Վեհափառ հայր, արդ ի դալստեանդ օրհնեալ զմեզ օրհնութեամբ Մեծին Գրիգորի Լուսաւորչի, զի մարթասցուք մեք իջմամբ Սրբոյ Հոգեւոյն որդիք արժանաւոր լինել Ցեառնդ մերում և յայսք երեալք ի վերայ մեր կատարեացին ի արիտուր պայտափ երախտեաց քոց և նախորդացդ։

Իսկ մեք, եղբարբ համօրէն, մաղթեսցուք ի Ցեառնէ կենդանութիւն

Հօրս մերում ՄԱԿԱՐԱՅՑ. Սրբազնագոյն Կաթուղիկոսի. զի կեցցէ նո յաստիս ամս բազում ի խնամել և յօրհնել զմեղ ի բարդաւաճանս ազգիս.

Դահլիճը կրկին թիւդաց աշակերտների երգով և յետոյ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց ազգու բանախօսութեամբ ցոյց տալ Ներ. Դպրանոցի նշանակութիւնը և այն նպատակները, որ պէտք է իրագործեն «պատուարժան հսդաբարձուք եւ շնորհալի ուսուցիչք»: Յետ այսորիկ Սրբազնագոյն Կաթողիկոսը բացատրեց այն կապը, որ ծխական ուսումնաբանները ունին Ներսիսեան Դպրանոցի հետ, և վերջինիս կոչումը գիտութեամբ և պարկեցա վարք ու բարզով օժտուած աշակերտներ պատրաստելու Ս. Էջմիածնի ճեմարանի համար: Վեհափառը յայտնեց իւր վիշտը, որ այս տարի ուսումնաւարտ աշակերտներից ոչ մէկը չէ ընդունել Ազգիս բարձրագոյն ուսումնաբանական հաստատութիւնը—Ճեմարանը:

Ապա Նորին Վեհափառութիւնը, այցելելով դպրանոցի հիւանդանոցը, գրադարանը և ննջարանները բարեհաճեց գորոտնոցի վարչութեան մի քանի ամենակարեւոր ցուցմունքներ անել նոցա բարելաւ պահպանութեան մասին:

Ժամի $10\frac{1}{2}$ Նորին Օծութիւնն բարեհաճեց այցելել Ս. Գոյիսնեան հայ օրիորդաց դպրոցը: Մողնւոյ Ա. Գէորգ եկեղեցւոյ գաւթում Նորին Վեհափառութեանը դիմաւորեցին դպրոցի վարչութեան անդամներն: Օրհնելով պատշգամրի վերայ ըտրուած ուսուցիչներին և ուսուցչներին, որոնց մի տո մի բաղդ ունեցաւ ներկայացնելու Նորին Օծութեանը դպրոցի տեսչուհի օր. Գայիսանէ Քալանթարեանը: Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց մտնել դահլիճը, ուր շարուած էին աշակերտուհիներ: Աշակերտուհիաց խուժմը երգեց «բարէ» երգը: Երգից յետոյ դպրոցի հայոց լեզուի ուսուցիչ պ. Յ. Նազարեանը կորդաց հետեւալ ճառը:

Վեհափառ Տէր.

Վեհ ու վսեմ է այս օրս դպրոցիս համար, որ աշա երջանկացած է՝ իւր անշուք յարկի տակը Վեհիդ շնորհաբեր գալստեանը արժանանալով, Թէպէտ մի փոքրիկ դպրոց շատ անշան աել է բոնում ազգաշխնութեան այն

մեծ գործում, որի կառավարութեան զեկը դրուած է Գերագոյն Նեկալարիդ Ս. Աջի մէջ՝ սակայն քանի որ անծիր ու անծայր ովկիանոսներն ել մանր կաթիլներից են գոյացած.—սյն դպրոցն էլ յանուն պյն հարիւրաւոր գպրոցների, որոնք տարածուած են ի սփիւր, Հայաստանեայց աշխարհիս և որոնց՝ Հանդամանքների բերմամբ վիճակուած չէ ազգի ամենամեծ և սրբափայլ հիւրիդ՝ ընդ նմին և ազգապետիդ անձկայի տեսութիւնը վայելել, — սրբազան պարտականութիւն է համարում իւր անսահման բերկութիւնը յայտնել հայ գպրոցների և առ հասարակ հայ գպրութեան Վեհ Գլխիդ։ Բայց մեր գպրոցը նաև պյն կողմից է բաղդաւոր, որ ոչ միայն ուրիշ հարիւրաւոր գպրոցների պէս գտնում է Վեհափառութեանդ բարձրագոյն հովանաւորութեան նելքոյ, այլ և պյն կողմից, որ սորա հիմնաբարը դըրուած է Քո սրբազան աջով։ Առաջնորդական աջդ գոյութիւն տուեց սորան։ Թո՛ղ ուրեմն Հայրապետական Աջդ զօրացնէ ու մշտնջենաւորէ պյտ գոյութիւնը։ Մի՛ տարի ևս, և ահա Հայ Օրիորդաց գպրոցներից ամենահներից մէկը՝ Ս. Գայիանեան ուսումնարանը պէտք է մտնի իւր կեանքի քսաներորդ գարեշրջանը. քսանամեայ պատկառելի հասակը պէտք է ակնածելի կացուցանէ սորան յաչս ամենեցուն։

Աստուածընամիր Հայրապետ, Եկեղեցին է՝ ասում ենք անդադար, պյն խարիսխը, որի վերայ պէտք է փարի Հայութիւնը՝ նորանում իւր փրկութիւնը գանելու համար. Եկեղեցին է՝ միշտ լսում է, պյն լստափայաը, որ Հայութիւնը պէտք է հասուցանէ անքոյթ և խաղաղ նաւահանգիստը. սակայն չգէտք է մոռանակը, իհարէ որ Եկեղեցւոյ նախագաւիթն էլ գպրոցն է։ Դա մի նուիրական գործարան է, որ փոխ առ փոխ նոր նոր անդամներ է ուղարկում Եկեղեցւոյ Ս. ծոցը. և ո՞րքան թարմ ու խելացի մաքերով են լինում առգործուած պյտ ընծայեալները, ո՞րքան ազդային է եղած պյն կաղապարը, որի մէջ ձուլուած են պյտ նոր ընծաները, և ո՞րքան ջերմ է եղած պյն բովքը, որի միջով անցել զտուել են դոքա, — պյնքան և երաշխաւորութիւն կայ, որ Եկեղեցին՝ պյտ բառի կրօնական նշանակութեամբ պէտք է աւելի անդրդուելի ու անսասան մնայ, պէտք է աւելի հաստատուն հիմք ունենայ Հայութեան բոլոր խաւերի մէջ, և որ նշանաւորն է՝ Եկեղեցին Հայութեան սիրութ իւր պատուանդանը պէտք է շինի։

Եետ Եկեղեցւոյ ս. աւազանի, որի մէջ վերստին ծնանում է Հայութիւնը՝ զբրիստոս զգենլով, գպրոցը երկրորդ աւազանն է, որտեղ ընկղմուողը՝ նման հնոյն Սելովամի աւազանի՝ քրիստոնէութեամբ ստացած Հոգւցին Արքոյ շնորհները շահեցնում. ու բազմապատկում է ուսուցչի հետ ուսանողի ունեցած մատաւոր տուր և առի մէջ։

Ի մի՛ բան ապրելով գպրոցում՝ գրկած ունինք Եկեղեցին. Ժամանակ է արդէն, որ «գպրոց» ու «Եկեղեցի». բառերը երկու միմեանցից անբաժան գաղափարներ յլացնէին մեր մէջ. վասն զի առանց Եկեղեցւոյ, առանց Եկեղեցւոյ վարդապետած բարոյական սկզբունքների գպրոցը, և առանց գպրոցի ընծայած լուսամիտ անդամների Եկեղեցին, — մէկը առանց միւսի.

Հայի գոյութեան. Հայի յառաջադիմութեան համար մի զգալի գաֆար՝ կումբին և ներկայացնում։

Այս է աչա, որ քաջապէս ըմբռնելով արթուն Հովուապետք՝ Ս. Առաւարչի Գահը բարձրանալու օրիցդ ի վեր գպրոցն է եղած Քո ամենամեծ հոգացողութեան առարկան։ Հայրապետութիւնդ այդ նկատմամբ շատ տիտուր սկիզբն ունեցաւ. սակայն ս. Սահաների և ներսէների արժանաւոր Յաջորդդ՝ Հայրապետական Գաւազանը առաւել ծանր պարագաների մէջ ձեռք առած լինելով՝ արդեամբ ցոյց տուքրւ որ ազգը ի գէմն իւր հաղարաւոր մանկանց՝ զուր չէ իւր փրկութեան ապաւենը իմաստոն կառ ավարութեանդ և Հզօր Աջիդ մէջ որոնում։ Հազարաւոր մանկանդ առաջը տարիուկէս փակ յնացած դպրոցների գռները Վեհիդ եռանդուն ջանքերով բացուեցան, բանարով իրանց եռեկից ազգային ոգուզ ապրելու կեանքրի դոները։ Ա. Դպէօ ահա. երբ ազգի Հայրապետը զոյդ ընդ եկեղեցի բառին առաջին անդամ արտասանեց «գպրոց», բառը այն բոպէից նա լուծեց Հայի դպութեան հարցերից ամենածժուարինը, այն վայրէնից արդէն գծողրեց նա այն ուղին, որ կողմը պէտք է ազգը ուղղէր իւր քայլերը՝ իրան շրջապատող թանձր լուարի մէջ լուսոյ ջահը գտնելու համար։

Վեհագոյն Հայր, ազգային տան լուսաւորութեան ջահը կազմող կայծերից մէկն է աչա, որ պահում է իւր մէջ սոյն դպրոցը։ Վառ է, բորբոքէ, ուրեմն, այդ կոյծը Քո «աստուածային» կայծաներով։ Վասն զի «Ճրագ է բան Քո ոսից մերոց։ և լոյս տայ շաւզաց մերոց։

Վեհափառ. Հայրապետը՝ օրչնելով դպրոցի առներին և նորտ մ. թ գործող անձանց, յիշեց, որ Ա. Գայիանեան դպրոցը իւր ներկայ վիճակով պարտաւոր է մի խումբ առնիւր երիտասարդների աշխատութեան, որոնք թէե զուրի էին նիւթական միջոցներից, բայց իրանց յոյսը բարձրելոյն վերտյ դնելով հիմնեցին սոյն դպրոցը, որ մինչև այժմ շարունակում են համերաշխատ թեամբ և ոիրով կառաջարում են։

Ա. յնուշեամբ դպրոցի երկու տաջոկերտուհիք ներկայացրին նորին Վեհափառութեան տշակերտուհեաց ձեռադործը՝ Ասոր հըրդաւոր ընթրիքը պատկերը, որ գեղեցիկ սոկեզօծ շրջանակով էր պատաճ։ Դպրոցի տեխուչին ինդիքեց ընդունել այս ձեռադործ պատկերը ի յիշառակ անմոռանալի այցելութեան նորին Արբութեան։ Վեհափառ Տէրը բարեհաճեց ընդունել այդ պատկերը։ Նորին Օծութիւնը, ուղղելով իւր խօսքը տեխուչուհուն, պատուիրեց նորան զարդացնել աշակերտուհիների մէջ համեստութեան զգացմունքը և տնարարութեան սկզբունքը, որպէս զի պիտանի զաւակներ լինին իրանց ծնողաց և հաս-

րակութեան։ Ապա հարցնելով, թէ ինչ ծրագրով է կատարվում դասաւութիւնը դպրոցի մէջ և ստանալով պատասխան թէ այն, որ Խնքն բարեհաճել է հաստատել ի գործադրութիւն բոլոր հայոց ծխական դպրոցների, Վեհափառ Հայրը պահպանի-չով օրհնեց աշակերտուհեաց և 25 բոպէ այցելութիւնից յետոյ թողեց դպրոցը։

Ժամի 11 - ին Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց այցելել Մարիամեան — Յովնանեան վարժարանն։

Վարժարանի ծառազարդ և ընդարձակ բակում, գարպասից սկսած մինչեւ տան մուտքը, երկու շարքով կանգնած էին ցանկալի Հիւրին ակրնկալու - մի կողմից իշխանուհի Արդութեանց մայրապետը՝ կուսանաց հետ միասին, միւս կողմից՝ ուսուցիչներն և վարժուհիները։

Վեհափառ Հայրապետը վարժարանի գաւիթը մտաւ թէ չէ, կոյսերը մօտեցան Նորին Սրբութեան Աջը համբուրելու. Նոյնն արին ուսուցիչներն և վարժուհիները, որոնց անուններն այդ միջոցին մի առ մի Նորին Վեհափառութեան ասելուն պատիւ ունեցաւ ուսումնարանի տեսուչ Պ. Փ. Վարդանեանը,

Այնուհետև Վեհափառ այցելուն առոյդ առոյդ քայլերով բարձրացաւ վարժարանի երկրորդ յարկը, ուր մեծ սրահի չորս պատի երկայնութեամբ տողուած էին դպրոցի սանիկները։ Դոքա Օծեալ Հիւրին նշանաբերուն պէս հնչեցրին օդը «բարէ» երգով, և Նորին Սրբութիւնն ամենքին օրհնութիւն շնորհեց։

Գեղեցիկ էր այդ տեսարանն և մի հանճարեղ վրձինով կտաւի վրայ գրոշմուելու արժանի։ Ալեզարդ Հայրապետն իւր օրհնասիիւռ Աջը մեկնած և շուրջանակի իւր տեսութեան կարու՛ խնդութիւնից և բերկրանքից սրտատրով հայ մանկտին։

Սրահից Վեհափառն անցաւ պատկերազարդ գահին և հաճեցաւ կարմիր սեղանի առջեւ բազմել, հրաւիրելով նստել և մայրապետին։ Երգը լոեց։

Այդ միջոցին դպրոցիս վարժուհի և նախկին աշակերտուհի օր. Ազնիւ Յակոբեանը հետեւալ սրտառուչ ուղերձը կարդաց Նորին Օծութեան։

ՄՐԲԱՋՆԱՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ

Ուրաշին է և երջաշնիկ Մարիամեան Յովնանեան ուսումնարանս, որ արժանանումէ, այսօր, վայելել Զերդ Աւեհափառութեան, Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթուղիկոսի բարեսէր և շնորհաբեր պայքարութիւնն. և ահա պատու աղագաւ այս կրթական մեծ յարկին տակ յաճախող մեր ամենքիս զգացած սրտադին և անպատմելի ուրախութիւնն ու ցնծութիւնը, ահաւասիկ չեմ վստահանում սփոել յոտս Զերդ Աւեհափառութեան ի գիմաց վարժարանիս:

Այսօրուայ քաղցր յիշատակի հետ միասին անջնջելի պիտի մնայ մեր սրտերում 1886 ամի Սեպտեմբերի 1ը, երբ բացուեցան կրկին մեր առաջ Նայ ուսումնարանների գուները, որոնք մի յայտնի ժամանակ փակուած մնալով խոր տիրութեամբ էր համակել իւր խեղճ սաներին, նոցա վերաբացման սրտատրոփ և անհամբեր սպասում էր հայ մանկունն: Զերդ Աւեհափառութեան հայրաբանամ շանիք և աշխատութեամբ էր միայն, որ յաջողուեց մեզ ունենալ կրկին մեր ուսումնարանները, Զերդ Աւեհափառութեան շնորհին էր, որ կրկին կենդանութիւն ստացան այս լուսոյ տաճարները, Ուստի մեր այս արտասովոր ուրախութիւնը, որ փայլումէ ամենիս երեսին, աղերսումնենք. Ովկ Աւեհափառ Տէր, բարեհամեցեք ընդունել իրեւ մի անկեղծ հաւաստիք մեր երախտագէտ զգացմոնքների: Զեր Հայրապետական այն մեծ խնամքն ու հոգացողութիւնքն, որ միշտ տածումէք բոլոր հայ ուսումնարաններին, ի թիւս որոց և սոյն ուսումնարանին մասին, յափտեանս անջնջելի պիտի դրոշմուին հայ մանկուայ երախտագիտութեամբ զեղոն հոգւոյ մեջ:

Խոնարհելով երախտագէտ սրտով Զերդ Աւեհափառութեան առաջ, Ովկ Սուրբ Հայրապետ, խնդրում ենք որդիական սրտով բաշխել առատապէս ամենքիս, Զերդ Հայրապետական Սուրբ Օքնութիւնը, մեզ՝ ի քաջալերութիւն և ուսումնարանաց՝ ի յարատեսութիւն:

Իսկ մենք, ովկ պաշտօնակիցք և աշակերտուչիք, բարձրացնելով մեր ձեռքերը գէպի երկինք, խնդրեմք միաբերան Ամենակարողից, որ պսակէ նորին Աւեհափառութեան ամեն շանքն ու գործերը, երկար և խաղաղաւէտ կեանք պարգետէ նորին Սուրբ Օծութեան, յօգուտ Հայ ազգիս և ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, ուսումնարանաց նորին և ուսանող մանկուայն:

Օրիորդի ճառը խոր տպաւորութիւն գործեց հանդիսականների վրայ և ակնյայտնի երեւում էր, որ Աւեհափառ ունկնդիրն էլ յուզուեցաւ Խրոն ուղղուած որդիական երախտագիտութեան այդ անկեղծ ու ջերմ խօսքերից: Օրիորդի համար մեծ բաղդաւորութիւն էր, որ երբ նա իւր ասելիքն աւտրուեց, Աւեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ նորան իւր մօտ կանչել,

օրշնել և ձեռքից թուղթն առնելով՝ հարցնել՝ « Ի՞նքդ ես գրել այս ճառը»: Պատասխանն էր համեստ «այս»:

Ապա թէ Նորին Օծութիւնն ոտքի ելաւ և ասաց, թէ Մարիամիան — Յովինանեան ուսումնարանը հանգուցեալ Յովհաննէս Յովինանեանի գործն է, թէ նա իմրե հարուստ մարդ իւր կենդանութեան ժամանակ շատ բարիք կատարեց, յետ մահուան էլ մեծ գանձ թողեց ժառանգներին, բայց թէ իւր անունը միայն մի գործով կըյաւերժանայ մեր ազգի մէջ, և յատկապէս այս վարժարանավ, որին Աստուած յարատեռութիւն պարգեհ:

Այս հակիրճ բանախօսութեան Վեհափառը յարեց մի « Հոգւոյն հանգուցելոյ», և մօաենալով ննջեցի ալի կենդանագրին է խորհրդաւոր լուսութեամբ երկար գիտեց նորա դէմքի գծիրը...

Դահլիճից չմեկնած Վեհափառը դարձաւ մայրապեսին այս խօսքերով. «Վարժարանիս ուսումնական յառաջադիմութեան մասին վստահ եմ», որ ըստ սրժանոյն կըհոգան ուսուցիչները, վարժուհիներն և տեսուչը. իսկ ձեզ յատուկ երեք բան եմ՝ պատուիրում — շարունակ փոյթ տանել, որ աշակերտուհիները համեստ լինին, գործասէր լինին, տնտես լինին»:

Եետոյ Նորին Օծութիւնը դարձեալ մտաւ մեծ սրահն և ծայրէ ծայր անցնելով աշակերտուհիների երկար շարքերի առջևից, կնքեց իւր այցելութիւնը «Պահպանիշով» և հայրական օրհնութեամբ:

Վարժարանի արգոյ հոգաբարձուներից միայն մէկը բաղդ ունեցաւ դիմաւորելու Վեհափառին ուսումնարանի շինութեան մէջ, և գա էր մնածապատիւ պ. Յովհաննէս Խատիսեանը: Միւսնիրը, քաղաքից բացակայ լինելով, ներկայ չեղան ընդունելութեան հանդիւմն:

Եւ ապա թէ $11\frac{1}{2}$ ժամին մեր Վեհափառ Տէրը մեկնեցաւ Մարիամիան — Յովինանեան վարժարանից, թողնելով գորա բազմաթիւ սանիկների և խոնարհ պաշտօնեաների որտի մէջ ամենաբաղը յիշատակ, որ յաւիտեան անջնջելի կըմնայ:

Ժամի 12 ին մօաւ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց այցելել Ա. Նշան եկեղեցւոյ գպրոցը, որ գտնվում է Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հովանաւորութեան ներ-

քոյ և կառավարվում է այդ Ընկերութեան միջներով։ Դըպա-
րսցի պատշգամի վերայ շարուած էին Ընկերութեան Վարչու-
թեան անդամները, փոխանդամները և դպրոցի ուսուցչուհի-
ները։ Թեմիս Առաջնորդ Գերազատիւ Արիստակէս Սրբազան
եպիսկոպոսը, որ մի և նոյն ժամանակ Ընկերութեան պատ-
ռութեան Վարչութեան ատենապետուհուն իշխանուհի Կա-
տարինէ Բէհրութեանին, որ իւր կողմից էլ ներկայացրեց Վար-
չութեան անդամներին, փոխ անդամներին և դպրոցի աւագ
վարժուհուն և վարժուհիներին։ Նորին Օծութիւնը մուտք
գործեց դպրոցի գաշլիճը, ուր արդէն շարուած էին դպրոցի
աշակերտուհիները և երգում էին «Բարէ», երգը։ Երգից յե-
տոյ դպրոցի աւագ վարժուհի օրիորդ Վարվառէ Զոհարեանը
քաղդ ունեցաւ ներկայացնել ն. Օծութեան դպրոցում աւար-
տող աշակերտուհեաց։ Որոնք այժմ Ընկերութիւնից առան-
ձին հիմնուած կար ու ձեփ դպրոցում շարունակում են
իրանց ուսումը, մասնագիտօրէն ուսանելով ձեռագործի բո-
լոր ձիւղերը։ Մի և նոյն ժամանակ, այդ աշակերտուհեաց
կողմից ինդրեց բարեհաճել ընդունել իրեւ ընծայ նոյա ձե-
ռագործի պառուղը՝ մի սփռոց և մի բարձ։ Սփռոցը և բարձը
սե լժաւշեայ էին, որոնց վերայ մետաքսեայ թելերով գործու-
ած էին շատ ներդաշնակ գոյներով ծաղիկներ և մէջը մի
զամբիւղ՝ լի ծաղիկներով։ Նորին Օծութիւնը բարեհաճեց
յայտնել, որ «ուրախութեամի ընդունում է այդ ընծան»։
Այնուհետեւ Նորին Օծութիւնը ցանկութիւն յայտնեց իմա-
նալու, թէ որ թաղերից են գլխաւորապէս դպրոցի սաները
և ստանալով պատասխան, թէ մեծ մասը նոցանից Հաւլաբա-
րից և քաղաքիս յետ ընկած թաղերից են, պահպանիչով
օրհնեց նոցա և Ընկերութեան անդամներին, որոնք մեծ ե-
ռանդավ և ջանքով առաջ են տանում այսպիսի մի սուրբ
գործ, որով առ յաւիտեան երախտապարտ են կայուցանում
թի՛լիգի քաւոր դասակարգի ծնողաց, տալով նոցա պիտանի
զաւակներ։ Այնուհետեւ Նորին Սրբութիւնը բարեհաճեց աչքի
անցնել դասաւաները և իմանալով, որ դպրոցը միայն երեք
բաժանմունք ունի առանց դուգընթացների՝ Ընկերութեան
միջների ողութեան պատճառաւ, յոյս առւաւ Վարչու-

թեանը եռանդով և աշխատութեամբ շարունակել իրանց գործըն, ասելով, որ միջոցներն իրանք իրանց կը գան, երբ Թիֆլիսի հայ հասարակութիւնը իրօք կը համոզուի Ընկերութեան կատարած սուրբ գործի կարևորութեան մէջ:

Սոյն այցելութեան միջոցին Ընկերութեան Վարչութեան ատենապետուհի իշխանուհի Էէհբութեանը այդ օրը իմանալով, որ նորին Օծութիւնը, նախընթաց, այն է կիւրակէ օրը նշանակած է եղել ընդունելու իւր մօտ Վարչութեան անդամներին, որդիական ներողութիւն խնդրեց, որ թիւրիմացութեամբ զրկուել են նոքա այդ բազդից: Վեհափառ Տէրը ժպատակով պատասխանեց իշխանուհուն հետեւալը. «Ես, ի հարկէ, ներում են ձեզ, որ դուք չեկաք ինձ մօտ, բայց ինձ դուք չեկը ներիլ, եթէ ես չը գայի ձեզ մօտ»:

Վեհափառ Հայրապետի այցելութեան միջոցին ուսումնարանների շուրջը խռնուած էին բազմաթիւ արք և կանսյոր, որոնք անհամբեր փափագում էին նորին Սրբութեան Աջն համբուրել և օրհնութիւնը վայելել: Ամենքն էլ արժանացան իրանց բաղձանքին:



Միաբան Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Մեղրեցւոց Շուշի քաղաքի Բարեկ. Մինաս Քահանայ Մինաս Վարդապետեանց սկսած 1885 թուից ամ ըստ ամէ նուիրած է յօգուտ Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի և յանուն վանիցն սրբոց Յակովբետնց երուսաղէմի հինգ հինգ բուրլի, խոստանալով շարունակել զայն ցմահ իւր, որին Աստուած վարձահատոյց եղիցի:

ՊԱՅՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂ.ՈՒ.Ծ.Ք. ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Սեպտեմբերի 19 ին Ս. Մինօդն պատուիրեց Երևանայ Հայոց Կոնսիստորիային արձակել Մրենոյ վանուց վանահայրութեան պաշտօնից տիրացու Յակոբն Ղազանչեանց իւր անընդունակութեան և անհոգ ժառայութեան համար և նորա տեղի նշանակել վանահայր ԽՃկոնի վանուց Յակոբ Վարդապետն: